

Նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

19/11/12թ. «Փյունիկ-2»-«Շիրակ-2» խաղը «Շիրակ-2» թիմի կողմից չտեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

15/11/12թ. «Ակադեմիա-99»-«Փյունիկ-1-99» խաղին «Ակադեմիա-99» թիմի ֆուտբոլիստ Վահագն Ենգոյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիային տուգանել 1000 դրամ:

16/11/12թ. «Փյունիկ-Սրգաշատ-97»-«Փյունիկ-2-97» խաղին «Փյունիկ-2-97» թիմի ֆուտբոլիստ Վաղինակ Գինոյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 2000 դրամ:

17/11/12թ. «Նիգ-Ապարան-97»-«Իմպուլս-2-97» խաղին «Նիգ-Ապարան-97» թիմի ֆուտբոլիստ Վարդան Սարգսյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Ապարանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 2000 դրամ:

20/11/12թ. «Փյունիկ-2-2000»-«Ակադեմիա-2-2000» խաղին «Փյունիկ-2-2000» թիմի ֆուտբոլիստ Կարեն Սիմոնյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 1000 դրամ:

20/11/12թ. «Փյունիկ-2-2000»-«Ակադեմիա-2-2000» խաղին «Ակադեմիա-2-2000» թիմի ֆուտբոլիստ Արմեն Մանուկյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիային տուգանել 1000 դրամ:

20/11/12թ. «Արտաշատ-96»-«Շենգավիթ-96» խաղից հետո «Արտաշատ-96» թիմի ֆուտբոլիստ Արտակ Զաքարյանին մրցակցին հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 10000 դրամ:

14Բ092 խաղին «Ֆուրման-99» թիմի կազմում չգրանցված ֆուտբոլիստ մասնակցեցելու համար, ՀՖՖ-ի մանկապատանեկան մրցումների անցկացման կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ: